ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-16-Ո-32
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության դատարանների բնականոն գործունեությունն արդյունավետ ապահովելու՝ դատարանների նստավայրերի միջև անարգել փաստաթղթաշրջանառությունն իրականացնելու, իրեղեն ապացույցների անվտանգ և ամբողջական տեղափոխման գործընթացը պատշաճ կազմակերպելու անհրաժեշտությունից,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նստավայրերում դատական գործերի, փաստաթղթերի շրջանառությունը, ինչպես նաև՝ իրեղեն ապացույցների տեղափոխման գործընթացը ժամանակին, արդյունավետ և ապահով կերպով իրականացնելու նպատակով ֆուրգոն տեսակի («Renault Dokker» մակնիշի) ավտոմեքենա ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության դատարանների պահուստային ֆոնդից «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին հատկացնել 8 400 000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» 512100 հոդվածով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. հունիսի 14
ք. Երևան